Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2802

ՀՍՍՌ-ՏԸՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

ԿԱՐԼ ՌԱԴԵԿ

# Վ. Ի. ԼԵՆԻՆ

Թարգմ. Ս. Ջ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ—№ 69.

ՅԵՐԵՎԱՆ—1925.

3К26
Л-14

3K26
L-74
14 NOV 2000
08 JUN 2005

ՀԵՂԱՍՏԵՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԵՆՐԵԳԵՏՈՒԹՅԱՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք.

## ԿԱՐԼ ՌԱԴԵԿ

# Վ. Ի. ԼԵՆԻՆ

Թարգմ. Ս. Ջ.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Public Library Moscow
7/XI-1922
Ս. ՍԱՀՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ—№ 69.
ՅԵՐԵՎԱՆ—1923.

3040
3040

24 JUL 2013

Թարգմանված է Գ. Ռ. Լ. Վ.

Հանրապետական գրադարան
Гос. Библиотека
ՀԱՍՀ-Арм.ССР
Մ. Մաշտոցի անվան
Մատենադարան
1899-88

Լուսժողկոմատի տպարան Վաղարշապատում



Վ. Ի. ԼԵՆԻՆ

# Վ. Ի. ԼԵՆԻՆ

(Կոմունիստական Կուսակցության 25-ամյակի առիթով)

Ինչպես ամեն բան բնության մեջ, այնպես էլ Լենինը ծնվել է, աճել և զարգացել։

Յերբ մի անգամ Վլադիմիր Իլիչը տեսավ, վոր թերթում եմ իր 1903 թ. հոդվածների հենց նոր լույս տեսած ժողովածուն, նրա դեմքը ծածկվեց խորամանկ ժպիտով և նա, ծիծաղելով, ասավ. «Շատ հետաքրքրական է կարդալ, թե վորպիսի հիմարներ ենք յեղել»։ Բայց յես այստեղ մտադրություն չունեմ համեմատելու Լենինի գանգի ձևը (յերբ նա յեղել է 10, 20, 30 տարեկան) այն գանգի հետ, վոր փայլում է Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի և Ժողկոմխորհի նիստերին։ Խոսքը վոչ թե Լենին—առաջնորդի զարգացման մասին է, այլ Լենինի մասին է, թե ինչ է նա այժմ։ Պավել Բարիսովիչ Աքսելրոդը, մենշևիզմի նախահայրը, վոր ամբողջ հոգով ատում է Լենինին, (նրա որինակով հեշտ է ուսումնասիրել, թե ինչպես սերը փոխվում է ատելության),—իր կատաղի հակաճառություններից (վորոնցով ուզում եր համոզել ինձ բոլշևիզմի վնասակարության մեջ ընդհանրապես, և Լենինի՝ մասնավորապես) մեկի ժամանակ պատմեց, թե ինչպես Լենինը առաջին անգամ ընկել եր արտասահման, և ինչպես իրենք այն ժամանակ միասին գնում եյին զբոսնելու, լողանալու։ «Յես այն ժամանակ զգացի, ասում է Աքսելրոդը, վոր գործ ունիմ մի մարդու հետ, վորը լինելու յե ռուսական հեղափոխության առաջնորդը։ Նա վոչ միայն պատրաստված մարքսիստ եր,—այդպիսիները շատ եյին,—այլ գիտեր ինչ է ուզում անել և ինչպես պետք է անել։ Նրանից ռուս հողի հոտ եր գալիս»։ Պավել Բարիսովիչ Աքսելրոդը շատ վատ

քաղաքագետ է և նրանից հողի հոտ չի գալիս։ Նա առանձնասենյակի ռեզոնյոր է (ճոռոմաբան), վորի կյանքի ամբողջ վոզբերդությունը նրա մեջ է, վոր այն ժամանակ, յերբ Ռուսաստանում չկար բանվորական շարժում, նա ծրագրներ եր հնարում, թե ինչպես պետք է զարգանա այդ շարժումը, իսկ յերբ դա զարգացավ այլ կերպ, նա սաստիկ նեղացավ և մինչև այսոր էլ չարացած ճչում է անհնազանդ յերեխայի վրա։ Բայց մարդ հաճախ ուրիշի մեջ շատ լավ է նկատում այն, ինչ վոր պակասում է իրեն, և Աքսելրոդը Լենինի մասին ասած իր խոսքերի մեջ զարմանալի ճիշտ է նկատել նրա բոլոր հատկությունները, վորպես ղեկավարի։

*
* *

Անհնարին է լինել բանվոր դասակարգի ղեկավար առանց իր դասակարգի ամբողջ պատմությունն ընդգրկելու։ Բանվոր դասակարգի ղեկավարը պետք է իմանա բանվորական շարժման պատմությունը։ Առանց այդ գիտության նա չի կարող ղեկավար լինել այնպես, ինչպես չկա ուժերի ամենանվազագույն վատնումով հաղթանակ տանող և վոչ մի ժամանակակից մեծ զորավար, վոր չիմանա ռազմագիտության պատմությունը։ Ռազմագիտության պատմությունը— դա բեցեպտների ժողովածու չէ այն մասին, թե ինչպես տանել պատերազմը, վորովհետև նկարագրված դրությունները վոչ մի անգամ այլևս չեն կրկնվում։ Բայց ռազմագիտության պատմության մանրամասն ուսումնասիրությունը սրում է զորավարի միտքը, դարձնում է նրան ռազմաճկուն, թույլ է տալիս նրան տեսնելու վտանգներն ու հնարավորությունները, վորոնց չի տեսնում միմիայն փորձով առաջնորդվող զորավարը։ Բանվորական շարժման պատմությունը մեզ չի ասում՝ ինչ պետք է անել, բայց նա հնարավորություն է տալիս համեմատել մեր դրությունը մեր դասակարգի կողմից արդեն զանազան վճռական մոմենտներին աղրած դրության հետ, տեսնել նպատակները և նկատել վտանգները։ Բայց բանվորական շարժման պատմությունը չի կարելի իմանալ առանց կապիտալիզմի պատմության մանրամասն ծանոթության, նրա մեխանիկային իր բոլոր արտահայտությունների մեջ, ինչպես տնտեսական, այնպես և քաղաքական, այսինքն առանց կապիտալիզմի թեորիայի ծանոթության։ Լենինը կապիտալիզմի թեորիան գիտե այնպես, ինչպես քչերը Մարքսի աշակերտներից։ Սա չի նշանակում ծանոթ լինել բնագրներին. այս բանում ընկ. Ռյազանովը, թերևս, նրանից շատ բարձր է։ Սակայն վոչ վոք Լենինի նման չի ըմբռնել Մարքսի թեորիան։ Վերցրեք նրա փոքրիկ գրքույկը, վոր գրված է արհեստակցական շարժման շուրջը ունեցած մեր վեճերի առիթով։ Այդտեղ նա հարձակվում է Նիկոլայ Իվանովիչ Բուխարինի վրա, մեղադրելով նրան սինդիկալիզմի, եկլեկտիզմի և ուրիշ այլ մեղքերի մեջ (յերբ Վլադիմիր Իլիչը հարձակվում է վորևե մեկի վրա—նրա մեջ գտնում է բոլոր հիվանդությունները, վորոնք հիշատակվում են հայտնի հին բժշկական մի գրքում, վոր մեծ հարգ է վայելում նրա կողմից)։ Բանավիճական այդ գրքույկում կա մի փոքրիկ եջ, վոր նվիրված է դիալեկտիկայի և եկլեկտիկայի միջև յեղած տարբերության քննությանը։ Այդ եջը, վորը չեն մեջբերում պատմական մատերիալիզմին վերաբերող հոդվածների ժողովածուներում, ավելի շատ բան է ասում պատմական մատերիալիզմի մասին, քան ուրիշ սուվար աշխատությունների ամբողջական գլուխներ։ Լենինը, ավելի քան ուրիշ վորևե մեկը, ինքնուրույնաբար հայտաբարել և ըմբռնել է մարքսիզմի թեորիան այն պատճառով, վոր նա դա ուսումնասիրել է հենց այն նպատակով, ինչ նպատակով վոր Մարքսը ստեղծել է այն։ Մի անգամ ծերունի Մերինգը գրել եր մի գրախոսական Ֆեյերբախի մասին գրված գրքի առիթով (գրել եր մի ռուս, ազգանունը չեմ հիշում)։ Այդ գրախոսականում նա հարց եր տալիս, թե ինչու գերմանացին չի կարող այսպիսի գիրք գրել։ Յեվ Մերինգն ինքը պատասխանում է այդ հարցին—գերմանացիները իրենց նպատակ չեն դնում Գերմանիայի ամբողջ հասարակական և քաղաքական կարգերի վերակազմությունը և այդ պատճառով նրանք կորցրել են փիլիսոփայական սիստեմներն ըմբռնելու հոտառությունը, սիստեմներ, վոր հանդիսանում են արտացոլումը այդպիսի վերակազմության ձգտումների։ Իսկ Ռուսաստանում հերթի յե դրված ընդհանուր հեղաշրջման խնդիրը։ Լենինը մտել է շարժման մեջ, վորպես հեղափոխական կամքի անձնավորում, և նա մարքսիզմը, կապիտալիզմի զարգացումը և սոցիալիզմի զարգացումը ուսումնասիրել է նրա հեղափոխական նշանակության տեսակետից։ Պլեխանովը հեղափոխական եր, բայց Պլեխանովը կամքի մարդ չեր և իր հսկայա-

կան նշանակությամբ, վորպես ռուսական հեղափոխության ուսուցիչ, նա ի վիճակի չեր սովորեցնել նրան հանրահաշիվ, բայց վոչ թվաբանություն։ Ինչպես պատմությունը ցույց տվեց, նա ինքը շփոթվեց ռուսական հեղափոխության թվաբանական չորս գործողության մեջ և այդ պատճառով նրա հեղափոխության հանրահաշիվը այլևս ավանդումն եր պատրաստի ուսմունքների, քան թե մտքի ինքնուրույն պայքար եր։ Այս կետումն է, վոր Լենին—թեորետիկից բաժանվում է Լենին—քաղաքագետը։

Մարքսիզմը Լենինին կապում եր բանվոր դասակարգի ընդհանուր ստրատեգիայի հետ, բայց դրա հետ միաժամանակ նա այդ մարքսիզմը ամենակոնկրետ ձևերով մոտեցնում եր այն ստրատեգիական նպատակին, վոր վիճակվել եր ռուսական բանվոր դասակարգին։ Կարելի է ասել, վոր գլխավոր շտաբի ճեմարանում նա ուսումնասիրել է վոչ միայն Կլաուզևիցներին, Ժոմինիներին և Մոլտկեներին, այլ և նա, ավելի քան վորևե մեկը Ռուսաստանում, ուսումնասիրել է ռուս պրոլետարիատի ապագա պատերազմի ռազմաբեմը։ Ցեվ հենց այս՝ իր գործունեության դաշտի հետ ունեցած ուժեղ, մտերիմ կապի մեջ է Լենինի ամբողջ հանճարը։ Մի այլ տեղ ես առիթ կունենամ քննելու այն հարցը, թե ինչու մի այնպիսի մեծ խելք, ինչպիսին է Ռոզա Լյուքսեմբուրգը, ի վիճակի չեղավ հասկանալու Լենինի արդարացիությունը բոլշևիզմի ծագման միջոցին։ Այստեղ ես կարող եմ միայն նախաբերել յեզրակացությունները այդ քննության։ Ռոզա Լյուքսեմբուրգը կոնկրետ կերպով չեր ըմբռնում՝ ինչով են տարբերվում ռուս պրոլետարիատի տնտեսական և քաղաքական պայքարի պայմանները լեհական և արևմտա-յեվրոպական պրոլետարիատի պայքարի պայմաններից։ Այդ պատճառով էլ նա 1904 թվին գբլորվեց դեպի մենշևիզմը։ Մենշևիզմը պատմական հեռանկարում—եր մանր-բուրժուական ինտելիգենցիայի և պրոլետարիատի ամենամանր բուրժուական տարրերի քաղաքականություն։ Մեթոդոլոգիական տեսակետից մենշևիզմը մի փորձ եր արևմտյան—յեվրոպական բանվորական շարժման տակտիկան փոխադրելու Ռուսաստան։ Ցերբ կարդում ես Աքսելրոդի կամ Մարտովի հոդվածները՝ բանվոր դասակարգի ինքնորեն զարգանալու մասին և այն մասին, թե ինչպես պետք է նա սովորի քայլել սեփական վոտքերով—այդ մտքերը համոզում են բոլոր նրանց, ովքեր արևմտա-յեվրոպական բանվորական շարժման ուսումնասիրությամբ են մեծացել։ Ցեվ ես հիշում եմ, թե ինչպես, ծանոթանալով ռուս սոց.-դեմոկրատների վիճաբանության՝ առաջին հեղափոխության ժամանակ, ես, չճանաչելով կոնկրետ ռուս իրականությունը, չեի կարողանում հասկանալ, թե ինչպես կարելի է բացասել այդ այբուբենական ճշմարտությունը։ Բայց այդ հոյակապ ծրագրում պակասում եին միայն պայմաններ այդ տակտիկը գործադրելու համար, և այժմ պատմականորեն ապացուցված է, վոր մենշևիկների բոլոր զրույցները բանվորական շարժման ինքնուրույնության մասին իրապես զրույցներ եին այն մասին, թե ռուսական բանվորական շարժումը պետք է յենթարկվի բուրժուազիային։ Զատ-փազանց հետաքրքրական է կարդալ այժմ այն վիճաբանությունները, վոր վերաբերում են կուսակցության կանոնադրության չարաբաստիկ առաջին կետին, վորի պատճառով առաջ յեկավ սոց.-դեմոկրատիայի բաժանումը՝ մենշևիկների և բոլշևիկների։ Վորքան աղանդավորական եր թվում այն ժամանակ Լենինի այն պահանջը, թե կուսակցության անդամներ պիտի համարվին միայն անլեգալ կազմակերպության անդամները։ Լենինը չեր կամենում, վոր բանվորական կուսակցության քաղաքականության դեկը տրվի շփոթ հայացքներ ունեցող մտավորականության ձեռքը։ Առաջին հեղափոխությունից առաջ ամեն մի դժգոհ բժիշկ ուփաստարան կարդում եր Մարքսը և իրեն սոց.-դեմոկրատ համարում, լինելով խակապես լիբերալ։ Մինչև անգամ մտնելով անլեգալ կազմակերպությունների մեջ, կտրելով իրենց կապերը մեշչանական շրջապատից, շատ մտավորականներ, ինչպես հետո ապացուցեց այդ պատմությունը, իրենց հոգու խորքում մնացին լիբերալ։ Բայց կուսակցության շրջանակների նեղացումը մինչև մի խումբ մարդիկ, վորոնք վտանգի եին յենթարկում իրենց՝ մասնակցելով անլեգալ կազմակերպություններին, այսուամենայնիվ թուլացնում եր բուրժուական տարրերի գերիշխանության փատանգը բանվորական կուսակցության մեջ և հնարավորություն եր տալիս բանվոր դասակարգի հեղափոխական ալիքին անցնել կուսակցական կազմակերպության մաղի միջով, կազմակերպության, վոր առանց այն էլ նշանակելի չափով մնում եր ինտելիգենտական։ Բայց այդ հասկանալու և դրա պատճառով կուսակցությունը պառակտելու համար պետք եր ռուսական իրականու-

թյանը կապված լինել այնպես, ինչպես կապված եր իր ամբողջ եյությամբ Լենինը, վորպես ռուս մարքսիստ, վորպես ռուս հեղափոխական։ Յեթե դա պարզ չեր բազմաթիվ լավ մարքսիստների 1903-4 թվին, դա արդեն միանգամայն պարզ յեղավ այն մոմենտից, յերբ Պ. Բ. Աքսելրոդը պրոլետարիատի դասակարգային պայքարը բուրժուազիայի դեմ փոխեց չարաբաստիկ զեմստվոյական կամպանիայի. այսինքն՝ թե բանվորները կարող են հաճախել լիբերալների բանկետները կրկնակի նպատակով—տեսնել բուրժուային և լցվել ատելությամբ դեպի կապիտալիստների դասակարգը, վորոնց բանվորները բանկետից դուրս, ինչպես հայտնի յե, չեյին տեսնում, և ապա, վորպեսզի կապիտալիստները դաստիարակվեն ըմբռնելու պայքարի անհրաժեշտությունը հանուն համազգային շահերի։

Բայց այն բանում էլ, ինչպես է Լենինը ճանաչում ռուս իրականությունը, նա տարբերվում է բոլոր նրանցից, ովքեր ձեռ եյին մեկնում ռուս պրոլետարիատի մտքի ղեկավարի գավազանին։ Լենինը վոչ միայն ճանաչում է ռուս իրականությունը, այլ և տեսնում և զգում է նրան։ Կուսակցության պատմության բոլոր շրջման կետերում, առանձնապես այն մոմենտին, յերբ մենք անցանք իշխանության գլուխ և կուսակցության վորոշումներից եր կախված 150 միլիոն մարդկանց բախտը, ինձ Լենինի մեջ զարմացնում եր այն, ինչ անգլիացիներն անվանում են «կոմմոն սենս», այսինքն—առողջ բանականություն։ «Ահա, կասեն մարդիկ, կոմպլիմենտ մի մարդու համար, վորի մասին մենք համոզված ենք, վոր այդպիսիները յերևան են գալիս հարյուր տարին մի անգամ—ընդունում է, վոր ունի առողջ բանականություն»։ Բայց հենց դրանում է նրա մեծությունը, վորպես քաղաքագետի։ Յերբ Լենինը լուծում է մի մեծ հարց, նա վերացական պատմական կատեգորիաներով չի մտածում, նա չի մտածում հողային ռենտայի, հավելյալ արժեքի, աբսոլյուտիզմի, լիբերալիզմի մասին։ Նա մտածում է Սաբաշնիկովի, Հեսսենի մասին, տվերցի Սիդորի և Պուտիլովի գործարանի բանվորի մասին, փողոցի մեջ կանգնած քաղաքապահի մասին և այն մասին, թե տվյալ միջոցը ինչպես կազդի գյուղացի Սիդորի և բանվոր Ոնուֆրիի վրա, վորպես հեղափոխությունը կրողների։

Յես յերբեք չեմ մոռանա Իլիչի հետ ունեցած իմ զրույցը



Բրեստի հաշտության կնքումից առաջ։ Մեր բոլոր պատճառաբանությունները, վոր առաջ եյինք բերում Բրեստի հաշտության կնքման դեմ—յետ եյին ցատկում ինչպես սիսեռը պատից։ Նա առաջ եր բերում շատ պարզ պատճառաբանություն—լավ հեղափոխականների կուսակցությունը ի վիճակի չե վարել պատերազմը, հեղափոխականներ, վոր սեփական բուրժուազիայի բկին չոքելով ընդունակ չեն համաձայնության գալու գերմանական բուրժուազիայի հետ։ Պատերազմը պիտի վարի գյուղացին։ «Մի՞թե չեք տեսնում, վոր գյուղացին քվեարկեց պատերազմի դեմ», հարցրեց ինձ Լենինը։ «Ներեցեք, ի՞նչպես այդ քվեարկեց»։—«Վոտներով քվեարկեց, փախչում է ճակատից»։ Յեվ հարցը սրանով լուծված եր նրա համար։ Վոր մենք գերմանական իմպերիալիզմի հետ չենք կարող կենակցել, Լենինը վոչ միայն գիտեր, ինչպես բոլորը, այլ, նա, պաշտպանելով Բրեստի հաշտության ընձեռած հանգիստը, վոչ մի բոպե չեր թաքցնում մասսաներից, թե ինչ աղետներ են նրան սպառնում։ Բայց նա ավելի վատ չեր, քան ռուսական հեղափոխության շուտափույթ խորտակումը։ Հաշտությունը հույսի ստվեր եր տալիս, գոնե միքանի ամսով հանգստանալու, և դա—հարցը վճռում եր։ Պետք եր, վոր գյուղացին իր ձեռով շոշափեր հեղափոխության տված հողը, պետք եր, վոր նրա առջև ծառանար հողից զրկվելու վտանգը, և այն ժամանակ նա կպաշտպաներ հողը։

Վերցնենք ուրիշ որինակ։ Դա մեր՝ լեհական պատերազմում պարտվելու պահին եր, յերբ բանակցություններ եյին սկսվել Ռիգայում։ Յես այդ ժամանակ մեկնում եյի արտասահման և մտա Իլիչի մոտ պրոֆմիությունների նկատմամբ յեղած վերաբերմունքի հարցի շուրջը նոր ընդգծվող տարաձայնությանց մասին խոսելու։ Ինչպես Բրեստի հաշտության հարցը լուծելու ժամանակ Լենինը իր հոգու աչքերով տեսնում եր Ռյազանի նահանգի գյուղացուն և, իմանալով, վոր պատերազմական դրամայում նրան և պատկանում վճռական դերը—իր վարքագիծը հարմարեցնում եր նրան, այնպես էլ—քաղաքացիական կռվից Ռուսաստանի տնտեսական վերականգնմանն անցնելու պահին—իր վարքագիծը հարմարեցնում եր շարքային բանվորին, առանց վորի չի կարելի տնտեսություն վերականգնել։ Հարցը նրա համար ի՞նչպես եր դրվում։ Կուսակցական ժողովներում խոսում եյին պրոֆմիությունների տնտեսու-

թյան մեջ ունեցած դերի մասին, պրոֆեսիոնալ կազմակերպությունները տնտեսական կազմակերպություններին զոդելու մասին, և բանը այնտեղ հասավ, որ սկսեցին վիճել սինդիկալիզմի և եկլեկտիկայի մասին, իսկ Լենինը տեսնում էր միայն զզզված արտաքինով բանվորին, որ կրել էր չլսվածն ու չտեսնվածը, և որը այժմ պետք է վերականգներ տնտեսությունը։ Որ տնտեսությունը պետք էր անմիջապես վերականգնել, որ պետք էր ուժերը լարել, որ դրա համար մենք իրավունք ունենք գործի քաշել բանվորական մասսան,—սա նրա համար անվիճելի էր, բայց կարող ենք արդյոք նրանց անմիջապես լծել աշխատանքի, ուղարկելով գործարան հազար հոգի մեր զինվորական ամենալավագույն ընկերներից, որ սովոր են միայն հրամանատարություն անել։ Սրանով արտադրությունը վոչինչ չէր շահի։ Պետք է թողնել, որ նրանք հանգստանան. նրանք չափազանց հոգնած են։ Սա ահա վճռական արգումենտ էր Լենինի համար։ Նա իր աչքերով տեսնում էր իրական ռուս բանվորին, ինչպես էր նա 21 թվի ձմեռը, և նա իր վողջ էությամբ զգում էր ինչը հնարավոր է, ինչը վոչ։

Մարքսը «Քաղաքատնտեսության քննադատության» առաջաբանում ասում է, որ պատմությունն իր առջև դնում է միայն լուծելի խնդիրներ։ Այլ խոսքով, սա նշանակում է, որ պատմության գործիք հանդիսանում է նա, ով ըմբռնում է, թե ինչ խնդիրներ պատմականորեն լուծելի են տվյալ բոպեին, և չի պայքարում ցանկալիի համար, այլ պայքարում է հնարավորի համար։ Լենինի մեծությունը կայանում է նրանում, որ յերեկ ստեղծված վոչ մի բանաձև չի խանգարում նրան տեսնելու փոխված իրականությունը, և որ նա արիություն ունի դեն շպրտելու ամեն մի՝ հենց յերեկ իր կողմից ստեղծված բանաձև, յեթե դա այսոր խանգարում է նրան իրականությունն ընդգրկելու։ Նախ քան իշխանությունը վերցնելը, մենք, վորպես հեղափոխական ինտերնացիոնալիստներ, առաջադրել էինք ժողովուրդների հաշտության լոզունգը ընդդեմ կառավարությունների հաշտության։ Յեվ հանկարծ մենք դարձանք բանվորական կառավարություն, իսկ մեծարգո ժողովուրդները դեռևս չեն թոթափել կապիտալիստական կառավարությունների լուծը։ «Ի՞նչպես կարող ենք մենք հաշտություն կնքել Հոհենցոլլերների կառավարության հետ»—հարց էին տալիս շատ ընկերներ։ Լենինը չարացած պատասխանում էր մեզ —«Դուք հավից վատ եք։ Հավը վախենում է իր շուրջը կավիճով գծված շրջագիծը անցնել, բայց նա իրեն արդարացնելու համար կարող է ասել, որ այդ գիծը իր շուրջը քաշել է ոտար ձեռք։ Իսկ դուք, որ ինքներդ ձեր սեփական ձեռքով բանաձև եք գծել, այժմ նայում եք նրան և վոչ թե իրականության։ Մեր ժողովուրդների հաշտության բանաձևը պետք է վոտքի հաներ մասսաները զինվորական և կապիտալիստական կառավարությունների դեմ պայքարելու։ Հիմա դուք ուզում եք, որ մենք կործանվենք և կապիտալիստական կառավարությունները հաղթեն հանուն մեր հեղափոխական բանաձևի»։

Լենինի մեծությունը նրանումն է, որ նա իրեն առջև դնում է իրականությունից յելնող նպատակներ։ Այդ իրականության մեջ նկատում է ուժեղ մի ձի, որ գնում է դեպի իր նպատակը, և վոտահանում է նրան։ Նա յերբեք չի նստում իր ցնորքների ճոճաթոռը։ Դրանից բացի, նրա հանճարը բնորոշվում է մի ուրիշ տարրով. նիշելով իր նպատակը, նա իրականության մեջ վորոնում է միջոցներ այդ նպատակին համապատասխանող, և չի բավականանում նրանով, որ սահմանում է միայն նպատակը, նա մտածում է և այն մասին, թե ինչ է հարկավոր այդ նպատակին հասնելու համար։ Նա մշակում է վոչ միայն կամպանիայի ծրագիրը, այլև այդ կամպանիայի կազմակերպությունը։ Մեր միայն սոսկ կազմակերպիչները հաճախ ծիծաղում էին Իլիչի վրա, որ նա կազմակերպող չէ։

Յեթե տեսնենք ինչպես է Իլիչն աշխատում իր առանձնասենյակում, Ժողկոմխորհում, կթվա թե անհնարին է լինել ավելի վատ կազմակերպող։ Նա չունի վոչ միայն քարտուղարների կազմ, որ նյութ նախապատրաստեին իր համար, այլ մինչև այսոր էլ նա դեռ չի սովորել թելադրել մեքենագրուհուն և մինչև անգամ ինքնագիր գրչին նայում է գրեթե այնպես, ինչպես Դոնի գյուղացին առաջին անգամ հանդիպած ավտոմոբիլին։ Բայց մեր կուսակցության մեջ ցույց տվեք գոնե մի մարդ, որ կարողանար առաջ քաշել այդ կենտրոնական գաղափարը մեր բյուրոկրատական ապարատը տաս տարվա ընթացքում բարեփոխելու մասին. մի անհրաժեշտ բարեփոխում, յեթե չենք ուզում, որ չինովնիկներից նեղացած գյուղացին հարայ տա։ Մենք բոլորս ճա-

նաչում ենք մեր բյուրոկրատական ապարատը, մենք բոլորս գոռում ենք, աղմկում «խորհրդային մեխանիզմի փոքրիկ պակասությունների» առիթով։ Բայց կուսակցության ղեկավարներից ոմն իրեն հարց տվեց, թե տնտեսական նոր քաղաքականությունը նոր նեցուկ յեղավ պրոլետարիատի և գյուղացիության միության և ինչպես անել ապա, վոր բյուրոկրատիան այդ միությունը չքքայքայի։ Ռուս պրոլետարիատի մեծ քաղաքագետը, սակայն, հիվանդության մահճում (նրա շնորհիվ կտրված իրականության մանրունքից) շարունակ մտածում եր մեր պետության կազմակերպման կենտրոնական խնդրի մասին, և պայքարի ծրագիր գծեց մի տասնամյակի համար։ Դա դեռ առաջին ուրվագիծն և, մանրամասները կփոփոխվեն փորձնական ստուգումների միջոցին։ Բայց վորքան շատ ենք մտածում այդ թռուցիկ ուրվագծի վրա, այնքան ավելի պարզվում է, վոր Լենինը նորից գտել եր յելքը, վոր նա նորից ապացուցեց, թե ինչպես իր մեջ միանում են մեծ քաղաքագետն ու քաղաքական մեծ կազմակերպողը։

Ի՞նչպես է այդ ամենը միացել նրա մեջ—աստված գիտե (թող ների ինձ ընկ. Ստեպանովը և կրոնի դեմ պայքարող հանձնախումբը)։ Պատմությունն ունի այնպիսի գաղտնի ապարատներ, վորոնց վոչ մի չեկա չի կարող գտնել։ Գերմանական բուրժուազիան չկարողացավ ամբողջացնել Գերմանիան, բայց մի ինչ վոր փոքրիկ կալվածատիրական դաստակերտում, պատմության այդպիսի մի ապարատում ստեղծվեց, ասածով թե աստանայով, այսինքն պատմության մոլեկուլային աշխատանքով—Բիսմարկը, վորը և կատարեց այդ գործը։ Ցերը կարդում ես նրա առաջին ղեկույցները, յերբ քայլ առ քայլ հետևում ես նրա քաղաքականության զարգացման, ՝ՇՈՒՄ ես զարմացած և ինքդ քեզ հարց ես տալիս, թե համայնվրոպական իրականությունն ընդգրկող այդ վիթխարի թափը վո՞րտեղից և պրուսական կալվածատիրոջ։ Միշտ նույն միտքն է գալիս մարդու գլուխ, յերբ մտածում ես մեր կուսակցության պատմության, հեղափոխության պատմության մասին և Իլիչի վրա։ 15 տարվա ընթացքում թվում եր, թե մարդը պայքարում եր բանաձևի ամեն մի ստորակետի համար, պայքարում եր ամեն մի «իզմի» դեմ, վոր հնարում եյին 25 տարիների ընթացքում, սկսած «խվոստիզմից» մինչև եմպիրոկրիտիցիզմը։ Այդպիսի ամեն մի «իզմ» Լենինի համար արտահայտություն եր իրական թշնամու, վորը գոյություն ուներ իրականության մեջ յեղած ոտար կամ բանվոր դասակարգի շարքերում։ Այդ «իզմ»-երը իրականության շոշափուկներն եյին, և այդ բոլոր կախարդական խոսքերի միջով Լենինը ներծծում եր իրականությունը, ուսումնասիրում նրան և ըմբռնում, մինչև վոր հրաշք կատարվեց, յերբ ընդհատակյա աշխատող մարդը, պարզվեց, վոր ամենից շատ իր վոտքի տակ հող ունեցող մարդն է ռուս իրականության մեջ։ Պատմությունը չի տեսել այսպիսի մի որինակ, վոր ընդհատակյա հեղափոխականը դառնա պետական մարդ։ Ղեկավարող թեորետիկի, քաղաքագետի և կազմակերպողի հատկությունների այս միացումը Լենինին դարձրեց ռուսական հեղափոխության առաջնորդ։ Բայց վորպեսզի այդ ղեկավարը լինի միակը, ամենից ճանաչված ղեկավար, պետք եր ելի ինչ վոր մարդկային բան, վորի համար և Լենինը սիրելի մարդն է ռուսական հեղափոխության։

Իբսենը փորձում է համոզել մեզ, վոր մարդուն բացարձակապես պետք է ճշմարտություն, ինչ վոր ճշմարիտ չէ իբսենյան անհատական բանաձևի մեջ։ Շատ մարդկանց համար ճշմարտությունը սպանիչ է, նա սպանիչ է մինչև անգամ շատ դասակարգերի համար։ Յեթե բուրժուազիան հասկանար ճշմարտությունն իր մասին և յուրացներ այն ներքնապես, նա այսոր արդեն ջախջախված կլիներ, վորովհետև ել ի՞նչպես պայքարել, յերբ պատմության ճշմարտությունը ասում է քեզ, թե դու վոչ միայն դատապարտված ես մահվան, այլ և՝ քո դիակն ել գցելու յեն կույտերին։ Բուրժուազիան իր վիճակից փրկվում է խլությամբ և կուրությամբ։ Բայց հեղափոխական դասակարգը կարիք ունի ճշմարտության, վորովհետև ճշմարտությունը իրականության ճանաչողությունն է և չի կարելի հաղթել իրականությունը, առանց այն ճանաչելու։ Այդ իրականության մի մասը հանդիսանում ենք մենք—բանվոր դասակարգը, Կոմմունիստական Կուսակցությունը։ Յեվ միայն մեր ուժերն ու թուլությունները ճանաչելով՝ մենք կարող կլինենք ձեռք առնել անհրաժեշտ միջոցները վերջնական հաղթանակի համար։ Լենինը պրոլետարիատին ասում է ճշմարտությունը, միմիայն ճշմարտությունը, վորքան ել դա տխուր լինի։ Ցերը բանվորներն ունկնդրում են նրան, գիտեն, վոր նրա ճառի մեջ վոչ մի ֆրազ չկա։ Նա ոգնում է մեզ խելամուտ լինել իրականության։ Ցես Դավոսում ապրում եյի թոքախ-

տից մեռնող հին բալշևիկ–բանվորի հետ։ Այդ ժամանակ վեճ կար ազգերի ինքնորոշման մասին, վորտեղ մենք՝ լեհ կոմմունիստներս, պայքարում էինք Լենինի հայացքների դեմ։ Այն ընկերը, վորի մասին խոսում եմ, կարդալով իմ թեզիսները Լենինի դեմ, ասավ ինձ. «Այն, ինչ վոր դուք գրում եք, ինձ միանգամայն համոզում է, բայց քանի՞ անգամ յես դեմ եմ յեղել Իլիչին, և միշտ պարզվել է, վոր սխալվել եմ»։ Այսպես են մտածում կուսակցության ղեկավար-աշխատողները, և սա ստեղծում է Լենինի հեղինակությունը կուսակցության մեջ, բայց այդպես չեն մտածում բանվորները։ Նրանց Լենինի հետ կապողը վոչ թե այն է, վոր նա հազար անգամ արդարացի յե դուրս յեկել, այլ այն, վոր յերբ նա անարդարացի յե դուրս յեկել, յերբ նրա ղեկավարությամբ սխալ է արվել, Լենինը ասել է բացեիբաց—մենք սխալ արինք, դրա համար էլ մեզ ջարդեցին և ահա թե ինչպես պետք է ուղղել այդ սխալը։ Շատերը հարցնում էին—ինչո՞ւ յե խոսում սխալների մասին, դա նրա ինչի՞ն է պետք։ Չգիտեմ, ինչու յեր անում դա Լենինը, բայց դրա հետևանքները շատ պարզ են։ Բանվորը անչափ զարգացած է արդեն, վոր հավատա հերոս-փրկիչների։ Յերբ Լենինը, վոչ մի բան չթաքցնելով, խոսում է սխալների մասին, նա բանվորին մոցնում է իր մտքի աշխատանոցը, հնարավորություն է տալիս նրան մասնակցելու վերջին վորոշումներին, և բանվորները նրա մեջ տեսնում են ղեկավար, վոր նրանց աշխատանոցն է (լաբորատորիան), վորը անձնավորում է իրենց դասակարգի պայքարը, վորը՝ հինց իրենք են։ Մեծ դասակարգը, վորին հարկավոր է ճշմարտություն իր մասին, ամբողջ սրտով սիրում է իր ղեկավարին, վորը—ճշմարտախոս մարդ է, վոր ասում է նրան ճշմարտությունը հենց իր մասին։ Բանվորը կդիմանա նրա բերանից դուրս յեկած ամեն մի ճշմարտության, վորքան էլ դա ծանր լինի։ Մարդ իր ուժերին հավատում է միայն այն ժամանակ, յերբ ինքն իր մեջ վոչինչ չի ծածկում, յերբ նա իր մասին գիտի ամենածանր բաները և յերբ նա կարող է ասել իրեն՝ և այնուամենայնիվ...Լենինը ոգնում է բանվոր դասակարգին իմանալու իրեն քայքայող ուժերը, իր բոլոր անկումները և, չնայած դրան, վերջին հաշվեկշռին ասելու—յես եմ նորին մեծությունը պրոլետարիատը, ապագա տերն ու ստեղծողը կյանքի։ Սրա մեջ է ահա Լենինի վերջնական մեծությունը։



25-ամյակի որը կուսակցության, վոր իր ուսերին կրում է յերկրագնդի վեցերորդ մասի ճակատագրի համար պատասխանատվություն, բայց վորը հանդիսանում է գլխավոր լծակը համաշխարհային պրոլետարիատի հաղթանակի, ռուս կոմմունիստները և ամենը, ինչ հեղափոխական է համաշխարհային պրոլետարիատի մեջ, պետք է մի միտք, մի ջերմ ցանկություն ունենան, վոր այդ Մովսեսը, վոր ստրուկներին դուրս է բերել գերության յերկրից, մեզ հետ միասին մտնի ավետյաց յերկիրը։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. Պետական Գրաքննչական Կոմիտե
7/XI-1922
Հանձնված է
Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ

«Ազգային գրադարան»
NL0180089

ԳԻՆԸ 10 ԿՈՊԵԿ

Գրքերը վաճառվում են Յերևան Պետհրատի գրախանութում